

Յերսենեվը. — միթէ ամեն ինչ կը կորչէ» եւ նա ափառում էր այդ ջահի, կորչող կեանքը, և նա իրան խօսք տուեց փըր-կել նրան...

Գիշերը լաւ չէր Հիւանդը շատ էր զառանցում. Մի քանի անգամ վեր կացաւ Յերսենեվը իր բազմոցից, ուների մատների վրայ մօտեցաւ անկողնին և տիրութեամբ ականջ էր դնում նրա անկապ թօթովանքին. Միայն մի անգամ Ինսարովը արտասանեց մի անսովոր պարզութեամբ. «Չեմ ուզում, զիմ ուզում, զու չը պիտի...» Յերսենեվը ցնցուեց և նայեց Ինսարօվին. Նրա դէմքը, տանջախից և մի և նոյն ժամանակ մահացող մաշարժ էր, և ձեռքերը ընկած էին թուլացած... «Չեմ ուզում», կրկնեց նա հազիւ լսելի ձայնով.

Բժիշկը Եկաւ առաւօտեամ, զլուխը շարժեց և նոր դեղեր գրեց: — Դեռ կրիզիսը հեռու է, ասաց նա, զլխարկը զնելով:
— Իսկ կրիզիսից յետոյ, հարցրեց Յերսենեվը:
— Կրիզիսից յետոյ: Ելքը երկու տեսակ է լինում, առ
Caesar, առ nihil.

Բժիշկը գնաց: Յերսենեվը մի քանի անգամ անց ու գարձ արաւ փողոցում. Նրան հարկաւոր էր մաքուր օդ: Նա վերադաւաւ և վերցրեց գիրքը: Շաումէրը նա վազուց էր վերջացրել, այժմ՝ ուսումնասիրում էր Գրօսը:

Յանկարծ զուոք հանդարա ճռոաց և զլուշութեամբ ներս մտաւ. ընակարանի տիրոջ աղջկայ զլուխը, որ ծածկուած էր, սովորականի պէս, թանձր աղլուխով:

— Այստեղ—ասաց նա կիսաձայնով—այն աղջիկն է, որ այն ժամանակ ինձ տասը կոպէի...

Դերձակի աղջկայ զլուխը յանկարծ թազնուեց և նրա տեղ երեց Ելնան:

Յերսենեվը տեղից վեր թուաւ խայթուածի պէս, բայց Ելնան չը շարժուեց, չը ճչաց... Կարծես նա ամեն ինչ հասկացաւ մի ակնիթարթում: Սարսափելի գունատութիւնը ծածկեց նրա դէմքը, նա մօտեցաւ վարագոյրներին, նայեց նրանց ետեւը, ձնոքերով մի շարժում գործեց և քարացաւ. Մի ակնթարթ ես, և նա կընկնէր Ինսարօվի վրայ, բայց Յերսենեվը կանգնեցրեց նրան.— Բնչ էք անում, ասաց նա զսզացող փսփսանքով.
— գուք նրան սպանել կարող էք,

Ելնան երերաց: Յերսենեվը մօտեցրեց նրան բազմոցին և նստեցրեց:

Ելնան նայեց նրա դէմքին, յետոյ չափեց նրան մի հայեցքով, յետոյ աչքերը յառեց յատակին:

— Նա մեռնում է, հարցրեց Ելենան այնպէս ցորու և
հանգարա, որ Բերսենեվը փախեց:

— Ի սէր Աստուծու, Ելենա Նիկոլաեվնա, սկսեց նա, —
բա Էք այդով... Նա հրանդ է, ճիշտ է, և բառութան վառն-
գաւոր... Բայց մնաք նրան կը փրկներ, որտ համար ես երաշ-
խուսոր եմ:

Նրա ուշը զլխին չէ, հարցրեց Ելենան նոյնով, ինչպէս
տուղին անդամբ:

— Այն, նա այժմ բնանահուացութեան մէջ է... Այսովէս է
լինում այդ հրանդութիւնների սկզբում, բայց դա ոչինչ նշա-
նակութիւն չունի, ոչինչ, — հաւատացնում եմ ձեզ, Զուր Խոր-
մեցէք:

Ելենան բարձրացրեց իր աչքերը և Բերսենեվը հասկա-
ցաւ, որ նա չէր լսում իր տուած պատասխանները:

— Եթէ նա մեռնէ, ասաց նա ճիշտ մի եւ նոյն ձայնով, —
ես էլ կը մեռնեմ:

Ինսարօվը այդ ակնթարթում թեթե կերպով հասաչեց,
Ելենան զողաց, բռնեց իր զլուխը, յետոյ սկսեց յետ անել իր
զլխարկի ժապաւէնները:

— Այդ ինչ էք անում, հարցրեց նրան Բերսենեվը:

Նա չը պատասխանեց:

Ի՞նչ էք անում, կը լինեմ Բերսենեվը:

— Ես մեռն եմ այստեղ:

— Ի՞նչպէս... երկար ժամանակով:

— Զը զիտեմ, գուցէ ամբողջ օրը, զիշերը, միշտ... չը
զիտեմ:

— Ի սէր Աստուծու, Ելենա Նիկոլաեվնա, ուշի ելիէք:
Ես, ի հարկէ, ոչ մի կերպ չէի կարող սպասել թէ կը տեսնեմ
ձեզ այստեղ, բայց այնուամենայնիւ ես... Ենթադրում եմ, որ
զուք կարձ ժամանակով էք մտել այստեղ: Յիշեցէք, տանը կի-
մանան...

— Եւ ինչ:

— Ձեզ կործնեն,.. Ձեզ կը գտնեն...

— Եւ ինչ:

— Ելենա Նիկոլաեվնա... Դուք տեսնում էք... Ինսարօվը
այժմ ձեզ պաշտպանել չէ կարող:

Ելենան զլուխը կախ դցեց, կարծես մտածմունքի մէջ
ընկաւ, մօտեցրեց թաշկինակը շրթունքներին, և ջղաձղական
հեկեկանքները, ցնցող ոյժով, յանկարծ դուրս թափուեցին նրա
կրծքից... Նա երեսն ի վայր ընկաւ բազմոցի վրայ, աշխառ
տում էր խլայնել հեկեկանքները, բայց նրա ամբողջ մարմին

բարձրանում էր և թրպրտում, ինչպէս նոր բռնուած թոշուն:

— Ելենա Նիկօլանկնա... ի սէր Աստուծու... կրկնում էր
Բերսենեվը, խոնարհուած նրա վրայ:

— Հը՞, ի՞նչ է, յանկարծ լուսեց Ինսարօվի ձայնը:

Ելենան ուղղուեց տեղը, իսկ Բերսենեվը, տեղն ու տեղը
սառած մնաց... Թիշ սպասելով, նա մօտեցաւ անկողնին Ին-
սարօվի զլուխը առաջուայ նման թոյլ ընկած էր բարձի վրայ.
աչքերը փակուած էին:

— Նա զառանցում է, չնչաց Ելենան:

— Կարծեմ, պատասխանեց Բերսենեվը, — բայց դա ոչինչ
բան է. այդ էլ միշտ այդպէս է լինում, մանաւանդ թէ...

— Ե՞րբ նա տկարացաւ, ընդհատեց Ելենան:

— Երէկ չէ, անցիալ օրը Երէկուանից ես այստեղ ևմ:
Վասահ եղէք ինձ վրայ, Ելենա Նիկօլանկնա:

Ես չեմ հեռանայ նրանից: Բոլոր միջոցները գործ կը
դութեան Եթէ հարկաւոր լինի, մենք բժշկական համախորհուրդ
կը հրաւիրենք:

— Նա կը մեռնէ առանց ինձ բացականչեց Ելենան, ձեռ-
քերը կոտրատելով:

— Ես ձեզ խօսք եմ տալիս ամեն օր յայտնել ձեզ հիւան-
դութեան ընթացքի մասին, և եթէ վրայ հասնէր իսկական
վտանգը...

— Երդուեցէք, որ գուք իսկոյն մարդ կ'ուղարկէք իմ ետե-
ւից երբ էլ լինի, ցերեկը, զիշերը. տոմսակ զրեցէք ուղղակի
ինձ... Սյժմ ինձ համար մի և նոյն է: Դուք լսում էք, խոստա-
նում էք այդպէս անել:

— Խոստանում եմ, Աստուծու առաջ.

— Երդուեցէք:

— Երդուում եմ:

Ելենան յանկարծ բռնեց նրա ձնոքը և նա դեռ չէր կա-
րողացել յետ քաշել ձեռքը, Ելենան իր շրթունքները սեղմեց
նրա վրայ:

— Ելենա Նիկօլանկնա... ի՞նչ էք անում, թոթովեց Բեր-
սենեվը:

— Ոչ... ոչ... հարկաւոր չէ... արտասանեց Ինսարօվը ցած,
անորոշ կերպով և ծանր:

Ելենան մօտեցաւ վարագոյրներին, թաշկինակը սեղմեց
ատամներով և երկար, երկար նայում էր հիւանդին: Անձայն
արտասունքները հոսեցին նրա թշերի վրայով:

— Ելենա Նիկօլանկնա, ասաց նրան Բերսենեվը, — նա
կարող է ուշքի զալ, ճանաչել ձեզ. Աստուծու զիտէ, լաւ կը

լինի զաւ եւ բացի զրանից ևս ժամ է ժամ սպասում եմ քըրշկին...

Ելենան վերցրեց զլխարկը բաղմոցից, զրեց զլխան և կանգ տառաւ նրա աչքերը տիտուր թափառում էին սենեակի մէջ, թուում էր թէ նա ցիշում էր...

—Ես չեմ կարող հետանայ, արտասանեց նա վերջապէս Բերսենեվը սեզմեց նրա ձեռքը—Հաւաքեցէք ձեր ոչքերը, տաց նա, —հանգստացէք, զար թազնում էք նրան իմ ինսամքին ևս այսօր երեկոյնոն կը զամ ձեզ մատ:

Ելենան նայեց նրան, տաց,—Օ՛, իմ բարի բարեկամ, հեկեկաց և դուրս վազեց:

Բերսենեվը յենուեց զններին: Մի վշտալի և զառն զգացմանը, որ զուրկ չէր մի ինչոր սարսափի աւրախութիւնից, ձնչում էր նրա սիրտը: «Իմ բարի բարեկամ», մտածեց նա, և վեր քաշեց ուսը:

—Ո՞վ է այսանդ, լսուեց Խնսարօվի ձայնը:

Բերսենեվը մօտեցաւ նրան:—Ես եմ այսանդ, Դմիտրի Նիկանօրօվիչ: Ի՞նչ էք ուզում: Ի՞նչպէս էք ձեզ զգում:

—Մենակ, հարցրեց հիւանդը:

—Մենակ:

—Իսկ նա:

—Ո՞վ է նա, համարեա վախկու հարցրեց Բերսենեվը:

Խնսարօվը լսեց:—Յափրուկը, չչնչաց նա, և նրա աչքերը նորից վակուեցան:

XXVI

Խնսարօվը ամբողջ ութ օր կեանքի և մահուան մէջ էր զանուում: Բժիշկը զալիս էր անդադար, հետաքրքրուելով, դարձեալ իրեկ երիասարդ մարդ, ծանր հիւանդով: Շուրինը լսեց Խնսարօվի վասնգաւոր զրութեան մասին և այցելեց նրան, երեացին Խնսարօվի հայրենակիցները—բօլղարները. Նրանց թուում Բերսենեվը ճանաչեց այն երկու օտարուի կերպարանքները, որոնք նրա զարմանքն էին զրգուել իրանց անակընկալ այցելութեամբ, ամարանոցում. ամնները անկեղծ ցաւակցութիւն էին յայտնում, մի քանիսները առաջարկած էին Բերսենեվին՝ փոխարինել նրան հիւանդի անկողնի մօտ, բայց նա չէր համաձայնուում, յիշելով Ելենային տուած խոստումը: Նա ամեն օր տեսնում էր Ելենային և զաղտուկ յայտնում էր նրան—երբեմն խօսքերով, երբեմն փոքրիկ տուածակով—հիւանդութեան ընթացքի բոլոր մանրամասնութիւնները: Սրտի որ-

պիսի անձկութեամբ էր Ելենան սպասում նրան, ինչպէս էր նա լսում Բերսենեվին և հարց ու փորձ անում: Նա ինքը շարունակ ձգառում էր դէպի Ինսարօվը. բայց Բերսենեվը աղաջում էր նրան չանել այդ բանը. Ինսարօվը քիչ էր մենակի լինում: Առաջին օրը, երբ իմացաւ Ինսարօվի հիւանդանալը, ինքն էլ հազիւ չը հիւանդացաւ: Հէնց որ վերադարձաւ Ինսարօվի մօտից, փակուեց իր սենենակում: բայց նրան ճաշի կանչեցին, նա մտաւ սեղանատունը մի այնպիսի դէմքով, որ Աննա Վասիլեվսան վախեց և ուզեց անպատճառ պառկեցնել նրան անկողնում: Ելենային սակայն աջողուեց կտարել իրան: «Եթէ նա մեռնէ, կրկնում էր նա, ևս էլ չեմ լինի» Այս միտքը նրան հանգստացրեց և ոյժ տուեց անտարբեր երիալու: Բայց և ոչ ոք նրան չատ չէր նեղացնում: Շուրբնը աշխատում էր կտարադութեամբ. Զօնան անձնատուր էր սղել մելանխոլիային և պատրաստում էր կարդալ Վերենը. Նիկոլայ Արտեմինիցը չատ անբաւական էր «գրողականի» յանախ այցելութիւններով, մանաւանդ որ նրա գիտաւորութիւնները կուրնատօվակու վերաբերմամբ չափազանց ծանր էին առաջ գնում: զործնական աւագ քարտուղարը տարակուսանքի մէջ էր և սպասում էր. Ելենան նոյն իսկ չորհակալութիւն չէր յայտնում Բերսենեվին. կան ծառայութիւններ, որոնց համար ծանր և ամօթալի է շընորհակալութիւն յայտնել: Միայն մի անգամ, չորրորդ տեսակցութեան ժամանակ (Ինսարօվը չատ վատ էր անցկացրել զիշերը, բժիշկը ակնարկ էր արել համախորհուրդի մասին), միայն այդ տեսակցութեան միջոցին նա յիշեցրեց Բերսենեվին նրա երդումի մասին: «Որ այդպէս է զնանք», — ասաց նա Ելենային: Սա վեր կացաւ և ուզում էն զնալ հագնուելու: «Ո՞չ, ասաց Բերսենեվը, սպասենք մինչեւ էզուցաւ: Իրինադէմին Ինսարօվը քիչ թեթևացաւ:

Ութ օր չարունակուեց այս տանջանքը: Ելենան հանդիսաւ էր երեւում, բայց ոչինչ չէր կարողանում ուտել, գիշերները չէր քնում: Մի բութ ցաւ էր նստել նրա բոլոր անդամների մէջ. մի ինչ-որ չոր, այրող ծուխ, կարծես, լցրել էր նրա զլուխը: «Մեր աղջիկ պարոնը ճրագի պէս հալւում է», ասում էր նրա մասին նրա աղախինը:

Վերջապէս, իններորդ օրը, կրիպիսը անցաւ: Ելենան նըստած էր հիւասենեակում Աննա Վասիլեվսայի մօտ և, ինքն չը հասկանալով թէ ինչ է անում, կարդում էր նրա համար „Московекія Вѣдомости“ լրագիրը: Բերսենեվը ներս մտաւ: Ելենան նայեց նրան (ինչպէս արագ և վախկոտ, և թափանցիկ և յուզուած էր լինում նրա առաջին հայեացքը, որ ամեն անգամ

զցում էր Բերսենեվի վրայ) և խոկոյն խօսցաւ, որ նու բարի համբաւ է բերել Բերսենեվը ժպառամ էր, նու թեթև կերպով գլխով նշաններ էր տնում. Ելենան վեր կացաւ նրան դիմաւորելու:

— Ուշքը զլուխը եկաւ, նու ազատուած է, մի չարթիդ յետոյ բոլորովին առողջ կը լինի, չնչաց Բերսենեվը:

Ելենան մեկնեց ձեռքերը, կարծես թէ հեռացնելով հարուստը, և ոչինչ չառաց, միայն նրա շրթունքները դողացին և ալ գոյնը առածածուեց նրա ամբողջ զէմբի վրայ. Բերսենեվը խօսք սկսեց Աննա Վասիլեվայի հետ, խոկ Ելենան զնաց իր սենեակը, ծնկների վրայ բնկաւ և սկսեց ազօթել, չնորհակար թիւն մասուցանել Աստուծուն... Թիթե, որափ արտասուրներ թափուեցին նրա աչքերից, նու յանկարծ զգաց մի ծայրայիդ յոդնածութիւն, դրեց զլուխը բարձի վրայ, չնչաց՝ «իսնդն Անգրէյ Պետրօվիչ» և խոկոյն քննեց խոնաւ թերթերունքներով և թշկրով, նու վազուց չէր քնել և լաց չէր եղել:

XXVII

Բերսենեվի խօսքերը կատարուեցին, բայց մասումք միայն վտանգը անցաւ, որովհետեւ Ինսարօվի ոյժերը զանդազ կերպով էին վերականգնում, և թժիշկը խօսում էր ամբողջ օրդանիզմի խոր և ընդհանուր ցնցման մասին: Թէև այդպէս, հիւանդը թողեց անկողինը և սկսեց ման գալ սենեակում, Բերսենեվը փոխուեց իր բնակարանը, բայց նու ամեն օր մանում էր իր, գեռ ևս թոյլ, բարեկամի մօտ և ամեն օր, առաջուայ պէս, լուր էր տալիս Ելենային նրա առողջական դրութեան մասին: Ինսարօվը չէր համարձակում զրել Ելենային և միայն կողմնակի կերպով, Բերսենեվի հետ ունեցած խօսակցութիւնների մէջ, ակնարկներ էր անում նրա մասին. խոկ Բերսենեվը, մի առ երես անտարբերութեամբ, պատմում էր նրան Ստախօվներին արած իր այցելութիւնների մասին, աշխատելով, սակայն, խմացնել նրան թէ Ելենան շատ վշացած էր և թէ այժմ նա հանդստացել է, Ելենան նոյնակէու չէր զրում Ինսարօվին. նա իր մտքում ուրիշ բան ունէր:

Մի անգամ Բերսենեվը նոր էր հազորդել նրան ուրախ դէմքով, թէ բժիշկը թոյլ է տուել Ինսարօվին կօտլէտ ուտել և թէ նա, երեխ, շուտով դուրս կը զայ. Ելենան մտածմունքի մէջ ընկաւ, զլուխը կախ արաւ...:

— Գուշակեցէք թէ ինչ եմ ուզում ասել ձեզ, խօսեց նա: Բերսենեվը շփոթուեց: Նա հասկացաւ Ելենային—Երեւի,

ասաց նա, նայելով դէպի մի կողմ,—դուք կամենում էք ինձ
ասել թէ ուզում էք տեսնել նրան։
Ելենան կարմրեց և հազիւ լսելի ձայնով արտասանեց։—
Այս։

—Ի՞նչ կայ որ։ Այդ բանը ձեզ համար, կարծում եմ,
շատ հեշտ է։ «Ճի՛, մտածեց նա, որպիսի զգուելի զգացմանք
կայ իմ սրտում»։

—Դուք ուզում էք ասել, որ ես արդէն առաջ... ասաց
Ելենան։—Բայց ես վախում եմ... Այժմ նա, ինչպէս դուք
ասում էք, քիչ է լինում մենակ։

—Դժուար չէ օգնելը, պատասխանեց Յերսենեվը, շարու-
նակ չը նայելով նրան։—Նախապէս իմաց տալ նրան ես, ի
հարկէ, չեմ կարող. բայց ինձ տուէք տոմսակ։ Ո՞վ կարող է
արգելել ձեզ որ գրէք նրան, ինչպէս լաւ ծանօթի, որին հա-
մակրում էք Այդտեղ դատապարտելի բան չը կայ։ Նշանակե-
ցէք նրան... այսինքն զրեցէք նրան թէ երբ կը լինէք։

—Ես քաշում եմ, չնշաց Ելենան։

—Տուէք տոմսակ, ես կը տանեմ։

—Դա հարկաւոր չէ, բայց ես ուզում էի ձեզ խնդրել...
մի բարկանաք ինձ վրայ, Անդրէյ Պետրօվիչ... էդուց մի գաք
նրա մօտ։

Յերսենեվը կծեց շրթունքը։

—Հա, այս, ես հասկանում եմ, շատ լաւ, շատ լաւ—Եւ
երկու, երեք խօսք աւելացնելով, նա արագ հեռացաւ։

«Աւելի լաւ, աւելի լաւ, մտածում էք նա, շտապելով
տուն։ Ես նոր բան չիմացայ, բայց աւելի լաւ։ Ի՞նչ մի հա-
ճոյք է կպշել օտարի բոյնի ծայրին։ Ես ոչ մի բանի մէջ չեմ
փոշմանում, ես արի այն, ինչ խիղճ հրամայում էք, բայց
այժմ բաւական է։ Տէրը նրանց հետ զուր չէր հայրս ասում
ինձ, մննք եղայր, սիբարիտներ չենք, արիստօկրատներ չենք,
ճակատագրից և բնութիւնից երես առած չենք, մննք նոյն խիկ
նահատակներ չենք, մննք աշխատաւորներ ենք, աշխատաւոր-
ներ և աշխատաւորներ։ Ուրեմն, հագիր կաշեայ գոգնոցդ, ով
աշխատաւոր, անցիր քո բանուորական դազգահի ետեւը, քո
մութ արհեստանոցում։ Խոկ արեգակը թող փայլէ ուրիշների
համար։ Մեր խուլ կեանքն էլ ունի իր հապարտութիւնը, իր
երջանկութիւնը։

Միւս առաւօտ ինսարօվը քաղաքային պօստով ստացաւ
մի համառօտ նամակ։ «Ապասիր ինձ, զրում էք նրան Ելենան,
և հրամայիր որ ոչ ոքին չընդունեն։ Ա. Գ.-ն չի կայ։

XXVIII

Ինսարօվը կարգաց Ելենացի և խոկոյն սկսեց կարգի բերել իր սենեակը, ինպրեց զերձակի կնոջը զուր տանել զեզերի սրաւակները, հանեց շամփրօկը, հոգաւ սիւրտակը թուրտ թիւնից և ուրախութիւնից նրա զլուխը պասյու էր զայխ և սիրաք բարախում էր նրա սաները կարառաւում էին, նա նառեց բազմոցի վրայ և սկսեց նայել ժամացոյցին: «Այժմ տասներկուսին քառորդ է մնում, ասաց նա ինքն իրան, —տասներկուսից առաջ նա ոչ մի կերպ չէ կարող զար, կը մտածեմ ուրիշ մի որ և է բանի մասին քառորդ ժամի ընթացքում, թէ չէ տանել չեմ կարող, Տասներկուսից առաջ նա ոչ մի կերպ չէ կարող»...

Դաները յետ զնացին, և Ելենան, թեթև մետաքսեայ զգեստի մէջ, ամրագովին զունաւ և ամրագովին թարմ, երիտասարդ, երջանիկ, ներս մասւ և մի թոյլ ուրախական ճիշով ընկաւ Ինսարօվի կրծքին:

—Դու կենդանի ես, զու իմն ես, կրկնում էր Ելենան, զրկելով և զգուելով նրա զլուխը Ինսարօվը ամրագովին ընդարմացել էր, նա չնշանառ էր զառնում այդ մերձաւորութիւնից, հաղումներից, այդ երջանկութիւնից:

Ելենան նառեց նրա կողքին, և սեղմեց Ինսարօվին, և սկսեց նայել նրան այն ծիծաղկու և փաղաքշող և քնքոյչ հայեցքով, որ լոյս է տալիս միայն կանացի սիրող աչքերի մէջ:

Նրա գէմքը յանկարձակի տիրեց:

—Ի՞նչպէս մաշուել ես, իմ խեղճ Դմիտրի, ասաց նա, ձեռքը տաներով նրա թշի վրայ, —ինչ միքրուք ունիս զու:

—Դու էլ մաշուել ես, իմ խեղճ Ելենա, պատասխանում էր Ինսարօվը, իր շրթունքներով բռնելով նրա մատները:

Ելենան ուրախուրախ թափահարեց իր զանդուրները:

—Ոչինչ, Տես թէ ինչպէս մննք կը լաւանանք: Փոթորիկը վրայ յարձակուեց ինչպէս այն օրը, երբ մննք հանդիպեցինք մատուռում, յարձակուեց և անցաւ: Այժմ մննք կ'ապրենք:

Ինսարօվը պատասխանում էր նրան միայն ժպիտով:

—Ա՛ն, ինչ օրեր էին, Դմիտրի, ինչ դաժան օրեր: Ի՞նչպէս է լինում որ մարդիկ ապրում են իրանց սիրածից յետոյ ես ամեն անդամ առաջուց զիտէի թէ ինչ կամէ Անդրէյ Պետրօվիցը, ծիշտ եմ ասում: իմ կեանքը ընկնում և բարձրանում էր քոնի հետ: Ողջոյն քեզ, իմ Դմիտրի:

Խնսարօվը չը գիտեր թէ ինչ անէ նրան։ Նա ուղում էր Ընկնել նրա ոտները։

—Ել ինչ եմ նկատել ես, շարունակեց նա, ձեռքով յետ տանելով Խնսարօվի ճակատից մազերը (ես այս ամբողջ ժամանակը շատ նկատողութիւններ էի անում, պարապութիւնից)։ Երբ մարդը շատ և շատ դժբախտ է, —որպիսի յիմար ուշադրութեամբ է նա հետեւմ այն ամենին, ինչ տեղի է ունենում նրա շուրջը ես, ծշմարիտ, երբեմն ուշադրութեամբ նայում էի անձին, իսկ իմ հոգու մէջ այնպիսի ցուրտ և սարսափի կար Բայց այդ բոլորը անցաւ, անցաւ, այնպէս չէ։ Ամեն ինչ լուսափայլ է առջեռում, այնպէս չէ։

—Դու ինձ համար առջեռում ես, պատասխանեց Խնսարօվը, —ինձ համար փայլուն է։

—Իսկ ինձ համար Յիշում ես, այն ժամանակ, երբ ես քեզ մօտ էի, ոչ վերջին անգամ... ոչ, ոչ թէ վերջին անգամ, կրկնեց նա ակամայ սարսուռ զզալով, —երբ խօսում էի քեզ հետ, ես, չը զիտեմ ինչու, յիշեցի մահը. այն ժամանակ ես չէի էլ ենթագրում թէ մահը հետեւում է մեզ Բայց զու հօ այժմ առողջ ես։

—Ես բաւական լաւ եմ, ես համարեա առողջ եմ։

—Դու ասողը ես, զու չը մեռար 0°, որքան երջանիկ եմ ես։

Կարճատե լոռ թիւն տիրեց։

—Ելենա, հարցրեց Խնսարօվը։

—Ի՞նչ է, սիրելիս։

—Ասա ինձ, զու մաքովդ չես մնցկացրել, թէ այս հրւանդութիւնը մեզ պատժելու համար էր ուղարկուած։

Ելենան լուրջ կերպով նայեց նրան։

—Այդ միտքը գալիս էր իմ գլուխը, Դմիտրի։ Բայց ես մտածում էի. ինչու համար պիտի ես պատժուած լինեմ։ Ի՞նչ պարտականութիւն եմ ես զանց արել, ինչի դէմ եմ մեղանչել։ Դուցէ իմ խիզը այնպէս չէ, ինչաէս ուրիշներինը, բայց նա լուր էր. թէ գուցէ ես քեզ դէմ եմ մեղանչել։ —Ես քեզ կը խանգարեմ, ես կը կանգնեցնեմ քեզ...»

—Դու ինձ չես կանգնեցնի, Ելենա, մենք միասին կերպանք։

—Այս, Դմիտրի, մենք միասին կերթանք, ես կերթամ քո ետեւից... Դա իմ պարագն է։ Ես քեզ սիրում եմ...ուրիշ պարագ ես չեմ ձանաչում։

—0°, Ելենա, արտասանեց Խնսարօվը, —ինչ անխորտակելի շղթաներ է դնում ինձ վրայ քո իւրաքանչիւր խօսքը։

— Ինչու խօսել շղթաների մտախն վրայ թերեց Ելենան։ —
Մենք ազատ մարդիկ ենք։ Այս շարանակեց նա, մասախն նա-
յելով յատակին, խոկ մի ձեռքով տուաջուայ նման շոկելով նրա
մազերը, — շատ բան ես փորձեցի վերջին ժամանակ, որի մտախն
ևս հասկացողաթիւն չանէի երբեց եթէ մեկը գուշակէր ի՞ն
մտախն, թէ ես, մի բարեկիրթ աղջիկ-սպարսն, միայնակ գուրս
կը զնամ առնից, զանազան սորքած պատրաւելիներով, այն էլ
ուր, — մի երտասարդի բնակարսնը, — որպիսի վրգովմանք
պիտի զգայի Եւ այս բոլորը կատարաւեց, և ես ոչինչ վրգով-
մանք չեմ զգում։ Աստուած վկայ է, առեկացրեց նա և գար-
ձառ դէպի Ինսարօվը։

Սա նոյնեց Ելենային պաշտելու մի այնպիսի արտայայ-
տութեամբ, որ Ելենան հանգարա կերպով իր ձեռքը նրա մա-
զերից իջցրեց նրա աշքերի վրա։

— Դմիտրի, սկսեց նո նորից, — զու չը զիտես, չէ որ ես
քեզ տեսել եմ այնտեղ, այդ սարսափելի անկողնում, ես տեսել
եմ քեզ մահուան ճիրանների ուշ, ուշաթափ…

— Դու ինձ տեսել ես։

— Այսու։

Ինսարօվը լսեց, — Եկաննեմն էլ այստեղ էր։

Ելենան զլիսով արաւ։

Ինսարօվը խոնարհուեց դէպի նրան։ — Օհ, Ելենա, չհջաց
նա։ — ես չեմ համարձակուում նայել քեզ։

— Ինչու, Անդրէյ Պետրօվիչը անբան բարի է, ես նրանից
չեմ ամաչում։ Եւ ինչու ամաչեմ։ Ես պատրաստ եմ ասելու
ամբողջ աշխարհին թէ ես քմնն եմ։ .. Խոկ Անդրէյ Պետրօվիչին
ես հաւատաւմ եմ, իրեն եղօրու։

— Նա ինձ ազատեց, բացականչեց Ինսարօվը։ — Նա ամե-
նաաղնիւ, ամենաբարի մարդն է։

— Այսու… Եւ զիտես զու որ ես ամեն ինչ նրան եմ պար-
տական։ Գիտես զու, որ նա առաջինը ինձ ասաց թէ զու ինձ
սիրում ես Եւ եթէ ես կարողանայի ամեն ինչ բաց անել։ ..
Այս, նա ամենաաղնիւ մարդն է։

Ինսարօվը ուշազրութեամբ նայեց Ելենային։ — Նա սիրա-
հարուած է քեզ վրայ, այնպէս չէ։

Ելենան աչքերը խոնարհեցրեց։ — Նա ինձ սիրում էր,
ասաց նա կիսաձայնով։

Ինսարօվը պինդ սեղմնց նրա ձեռքը։ — Օ՛, դուք, ոռւս-
ներդ, — ասաց նա — ոսկի են ձեր սրտերը։ Եւ նա, նա պա-
հում-պահանում էր ինձ, նա զիշերները չէր քնում… Եւ զու,

դու իմ հրեշտակ... Ոչ յանդիմանութիւն, ոչ տատանում... և
այս բոլորը ինձ, ինձ...

—Այս, այն, ամեն ինչ քեզ, որովհետեւ քեզ սիրում են:
Ա՛ն, Դմիտրի, որքմն սա օտարութիւն է. ես, կարծեմ, քեզ ար-
դէն ասել եմ.—բայց սա մի և նոյն է, ինձ հաճելի է կրկնելը,
իսկ քեզ հաճելի կը լինի լսելը,—երբ ես քեզ տեսայ առաջին
անգամ...

—Ինչո՞ւ քո աչքերում արտասուք կայ, ընդհատեց ին-
սարօվը:

—Իմ աչքերում, արտասունք:—Նա սրբեց աչքերը թաշ-
կինակով! Օ՛, անմիտ, նա դեռ չը գիտէ որ երջանկութիւնից
էլ լաց են լինում: Հա, ես ուզում էի քեզ ասել. երբ ես քեզ
տեսայ առաջին անգամ, քեզանում, ձշմարիտ ասած, առանձին
մի բան ես չը գտայ: Յիշում եմ, սկզբում Շուրբինը ինձ աւելի
շատ էր դուք գալիս, թէն ես երբէք չեմ սիրել նրան, իսկ ինչ
վերաբերում է Սնդրէյ Պետրօվիչին:—ճ, այդտեղ կար մի
բոպէ, երբ ես մտածում էի. նա չէ արդեօք: Իսկ դա—ոչինչ.
բայց փոխարէնը...յետոյ...յետոյ...դու ջուխտ ձեռքով վերցրիր
իմ սիրաը:

—Ինայիր ինձ...խօսեց ինսարօվը: Նա ուզեց վեր կենալ,
բայց խկոյն ընկաւ բաղմոցի վրայ:

—Ի՞նչ եղաւ քեզ, հոգատարութեամբ հարցրեց Նլենան:
—Ոչինչ...ես դեռ քիչ թոյլ եմ... Այս երջանկութիւնը իմ
ոյժերին համապատասխան չէ...

—Որ այդպէս, հանդարտ նստիր: Մի շարժուէք, մի յու-
զուէք, աւելացրեց նա, մատը նրա վրայ թափ տալով:—Եւ
ինչո՞ւ դուք հանել էք, ձեր շափրօկը: Դեռ վազ է ձեզ համար
պճնուելը: Նստեցէք, իսկ ես ձեզ կը պատմեմ հէքիաթներ:
Լսեցէք և լուցէք: Զեր հիւանդութիւնից յետոյ ձեզ վեաս
է երկար խօսելը:

Ելենան սկսեց խօսել Շուրբինի, կուրնատովսկու մասին
այն մասին, թէ ինքը ինչ էր անում վերջին երկու շարժուայ
ընթացքում, այն մասին, թէ լրազիրներին նայելով, պատե-
րազմը անխուսափելի է և հետեւաբար, հէնց որ ինսարօվը
բոլորովին կ'առողջանայ, հարկաւոր կը լինի, բոպէ չը կորցնե-
լով, գտնել ձանապարհուելու միջոցներ... Նա ասում էր այս
բոլորը, նստած ինսարօվի կողքին, յենուելով նրա ուսին...

Ինսարօվը լսում էր նրան, լսում, կամ գունատուելով,
կամ կարմրելով... Նա մի քանի անգամ ուզում էր կանգնեցնել
նրան, և յանկարծ նստած տեղը ուղղուեց:

— Ելենա, ասաց նա նրան մի օտարութիւն և սուր ձայնով, —
թող ինձ, հեռացիք

— Ի՞նչ, խօսեց Ելենան զարմացած: — Դու վաստ ես զգում
քեզ, տեկրացրեց նա աշխայժ կերպով:

— Ոչ... ես լու եմ... բայց, խնդրեմ, թող ինձ,

— Ես ըեղ չեմ հասկանում: Դու ինձ վանդաւմ ես... Այդ
ինչ ես անում, ասաց նա յանկարծ: Խնարովք կուցաւ զիւա-
նից համարեա մինչեւ յասակը և իր շրթունքները սեղմեց Ելե-
նայի ոսներին: — Այդ մի անիր, Դմիտրի, Դմիտրի...

Խնարովք բարձրացաւ:

— Ռւբենի, թող ինձ: Գիտես, Ելենա, երբ ես հրամագա-
ցայ, խելայն ուշքից չը զրկուեցայ, ես զիտէի, որ կորսոփ
ծացրին եմ, նոյն խել տարութեան մէջ, զառանցանքի մէջ, ես
հասկանում էի, ազօտ կերպով զգում էի, որ մահը զայխ է
զէսփի ինձ, ես մնաս բարեւ էի տառւմ կեանքին, քեզ, ամեն
ինչին, ես հրամեշտ էի տայխ յոյսին... Եւ յանկարծ այս վերա-
ծութիւնը, այս լոյսը խաւարից յետոյ, զու... զու... փմ կողքին,
ինձ մօտ... քո ձայնը... Այս բոլորը իմ ոյժերից վնը է:
Ես զգում եմ որ սիրում եմ քեզ շերմապէս, ես լսում եմ, որ
զու ինքդ մասում ես քեզ խօս: Ես ոչ մի բանի համար սկա-
ռասիսանառու չեմ... Հեռացիք:

— Դմիտրի... շնչաց Ելենան, և իր զլուխը թաղցրեց նրա
ուսին նա միայն այժմ հասկացաւ նրան:

— Ելենա, շարունակեց նա, — ես քեզ սիրում եմ, զու
այդ գիտես, ես իմ կեանքը պատրաստ եմ տալ քեզ համար...
ինչու եկար զու ինձ մօտ այժմ, երբ ես թոյլ եմ, երբ ես
ինձ շնմ ամրում, երբ իմ ամրողջ արիւնը այրուած է... զու
իմ ես, ասում ես զու... զու ինձ սիրում ես...

— Դմիտրի, կրկնեց Ելենան և ամբողջապէս բանկուեց և
աւելի պինդ սեղմուեց նրան:

— Ելենա, խղճան ինձ հեռացիք, ես զգում եմ, ես կարող
եմ մեռնել, ես չեմ տանի այս յոյզերը... ամրողջ հողիս ձգտում է
զէսփի քեզ... մտածիր մահը քիչ էր մնում որ բաժանէր մնդ...
և այժմ զու այստեղի զու իմ զրկում... Ելենա...

Ելենան ամրողջովին զողաց: — Ռւբենի, վերցրու ինձ,
շնչաց նա հաղիւ լսելի ձայնով...

XXIX

Նիկոլայ Արտեմիվիչը, յօնքերը կիտած, յետ ու առաջ էր
զնում իր առանձնասանեակում: Շուբինը նստած էր պատու-

հանի մօտ և ոտք ոտի վրայ դրած, հանգարտ ծխում էր սիգարը:

—Դադարեցէք, ինզրում եմ, անկիւնից անկիւն քայլելուց, ասաց նա, թափ աալով մոխիրը սիդարից:—Ես շարուրակ սպասում եմ որ դուք կը խօսէք, հետեւում եմ ձեղ—վիզ ցաւեց: Բայց դրանից, ձեր քայլուածքի մէջ ինչոր լարուած, մելօդրամատիւկան բան կայ:

—Ձեր բանը մի զլուխ գէսից-վէնից գուրս տախն է, պատասխանեց Նիկօլայ Արտեմիևիչը: Դուք չէք ուզում մանել իմ զրութիւնը, դուք չէք ուզում հասկանալ թէ ես սովորել եմ այդ կնոջը, թէ ես վերջապէս կապուած եմ նրան, թէ նրա բացակայութիւնը ինձ պիտի տանջէ: Ահա արդէն հոկտեմբերն է, ձմեռը մօտեցել է... ի՞նչ է նա կարող անել Ռիզայում:

—Երեւի գուլպա է գործում... իր համար, իր, ոչ թէ ձեղ համար:

—Միծաղեցէք, ծիծաղեցէք. իսկ ես ձեղ կ'ասեմ, որ ես այդպիսի կին չեմ ճանաչում: Այդ ազնւութիւնը, այդ անշահասիրութիւնը...

—Ներկայացրել է նա մուրհակը դատարանին, հարցրեց Շուբրինը:

—Այդ անշահասիրութիւնը, կրկնեց, ձայնը բարձրացնելով, Նիկօլայ Արտեմիևիչը—զարմանալի է: Ինձ ասում են, աշխարհում միլիօն ուրիշ կանայք կան. իսկ ես կ'ասեմ. ցոյց տուէք ինձ այդ միլիօնը. ցոյց տուէք ինձ այդ միլիօնը, ասում եմ ես. օք քունք—qu'on me les montre! Եւ չէ զրում, ահա ինչն է սպանիչը:

—Դուք պերճախօս էք, ինչպէս Պիւթագորոսը, նկատեց Շուբրինը.—բայց զիտէք ինչ ես ձեղ խորհուրդ կը տայի:

—Ի՞նչ:

—Երբ Աւգուստինա Խրիստիանութեան կը վերադառնայ... դուք հասկանո՞ւմ էք ինձ:

—Այո, յետոյ:

—Երբ դուք նրան կը տեսնէք... Դուք հետեւում էք իմ մտքի զարգացման:

—Այո, այս:

—Փորձեցէք նրան ծեծել, ինչ զուրս կը գայ:

Նիկօլայ Արտեմիևիչը երեսը շուռ տուեց վրդովուած:

—Ես էլ կարծում էի թէ մի իսկապէս խելօք խորհուրդ կը տայ: Եւ ինչ սպասես նրանից: Արտիստ, մի մարդ, որ կանոններ չունի...

—Կանոններ չունի: Բայց ահա, ասում են, ձեր սիրելին,

պարոն Կարնոստօվակին, կանոններ ունեցագ մարզը, երեկ ձեզ պահից տարել է հարիւր սուրբի արծաթի Սա արդէն քաղաքաւ փառաթիւն չէ, հասմանայնուեցէք:

— Ի՞նչ անենք Մենք խաղում էինք վողով, ի հարկէ, ևս կարող էի սորտուել... Բայց նրան այնքան քիչ են զնահատում ոյս տաներ...:

— Ի՞նչ է նա մասձել, վրայ բերեց Շուրինը,—տուել է, ինչ ինչ պիտի լինի, նա իմ աներս է թէ չէ—զա դեռ թագուաւուն է ճակատագրի սափորի մէջ, իսկ հարիւր սուրբին լու է մի մարզու համար, որ կաշտաքներ չէ մերշնում:

— Աներ, ի՞նչ աներ եմ ես: Vous venez, mon cher, ի հարկէ, ամեն մի որիշ ազջիկ ուրախ կը լինի այդորի վեասցուովի Խնդներդ զատեցէք, միք մարդ, խելօք, ինքն իրան մարդ է զաւել, երկու նահանգներում լուծ է քաշել...

— ... ևսն նահանգում նահանգապետին քիթից բռնուն ման էր ածում, նկատեց Շուրինը:

— Ետա կարելի է, Երեւի այզպէս էլ հարկաւոր էր: Գործ նական մարդ, գործեր սարքուց...

— Լաւ թուզի էլ է խաղում, նորից նկատեց Շուրինը:

— Հա, բաւ թուզի էլ է խաղում: Բայց Ելենա Նիկոլաևի նան... Միթէ նրան կարելի է հասկանալ Աւզում եմ իրանալ, ուր է այն մարզը, որ յանձն առնէր բժիրունել, թէ ինչ է նա ուզում նա կամ ուրախ է, կամ տիսուր, կը մաշտի յանկարծ այնպէս, որ վրան նայել չի կարելի, բայց յանկարծ կը լաւանայ, և այս բոլորը առանց որ և է յայտնի պատճառի...:

Ներս մտաւ անհրապոյք տեսքով լսիկէը, բերելով մատուցարանի վրայ մի բաժակ սուրճ, սերամանը և պարսիմաններ:

— Հօրը զուր է գալիս վեսացուն, շարունակեց Նիկոլայ Արտեմիվիչը, պարսիմանը ձեռքում մաժ տալով—իսկ ազջիկը ինչ զործ ունի զրա հետո: Դա լաւ էր նախկին, նահապետական ժամանակներում, իսկ այժմ մենք այդ բոլորը փոխել ենք: Nous avons changé tout ça: Այժմ օրիորդը խօսում է ում հետ կամենաք, կարգում է, ինչ իրան հաճելի է, մենակ ման է գալիս Մոսկուայում առանց լաքէի, առանց աղախնու, ինչպէս Պարիզում. և այս բոլորը ընդունուած է: Այս քանի օրերը ևս հարցնում եմ. ուր է Ելենա Նիկոլաևինան: Ասում են, բարեհաճեց գուրս զնալ: Ուրի Յայտնի չէ: Սա ինչ է—կարդ է:

— Վերցրէք ձեր բաժակը և արձակեցէք ծառային, ասաց Շուրինը: Ինքներդ էք ասում, թէ չը պէսօք է devant les domestiques, աւելացրեց նա կէս-ձայնով:

Կարեէյը ճակատի տակից նայեց Շուրինին, իսկ Նիկոլայ

Արտեմենվիչը վերցրեց սուրճի բաժակը, սեր ածեց և մօտ տասը
հատ պագսիմատ քաշեց արջներ:

—Ես ուզում էի տսել, սկսեց նա, հենց որ լաքէյը գուրս
եկաւ, թէ ես այս տան մէջ ոչինչ նշանակութիւն չունիմ: Ահա
բոլորը: Որովհետեւ մեր ժամանակ ամենքը դատում են արտա-
քինով. մի մարդ և դատարկ է և յիմար, բայց իրան փրուած է
պահում: Նրան յարգում են, իսկ միւսը գուցէ տաղանդներ ու-
նի, որոնք կարող էին... կարող էին մեծ օդուտ բերել, բայց
համեստութեան պատճառով...

—Դուք պետական մարդ էք, Նիկոլինկա, հարցրեց Շու-
րինը շատ բարակ ձայնով:

—Բաւական է որքան մասխարութիւն արիք, բացական-
չց Նիկոլայ Արտեմենվիչը բարկացած: —Դուք ձեզ մոռանում
էք: Ահա ձեզ մի, նոր ապացոյց, որ ես այս տանը ոչինչ նշա-
նակութիւն չունիմ, ոչինչ...

—Աննա Վասիլեվնան ձեզ նեղում է... խղճուկ, ասաց Շու-
րինը ձգուելով: Է՞՞, Նիկոլայ Արտեմենվիչ, մենք մեղաւորներ ենք:
Աւելի լաւ կը լինէր որ Աննա Վասիլեվնայի համար մի որ և
է ընծայ պատրաստէիք: Այս քանի օրերը նրա ծնունդն է, իսկ
դուք զիտէք թէ որքան թանգ է նրա համար ուշադրութեան
ամենափոքրիկ նշանը ձեր կողմից:

—Այս, այս, շտապով պատասխանեց Նիկոլայ Արտեմեն-
վիչը, շատ չնորհակալ ևմ ձնկանից, որ յիշեցրիք: Ինչպէս չէ,
անպատճառ Այ ես ունիմ մի բան. մի մանեակ, ես նրան այս
քանի օրը գնեցի Թօղենչտրասուխից, բայց չը զիտեմ, ճշմարիտ,
լաւ կը լինի:

—Դուք այդ բանը չ՞ որ այն միւսի, Ռևիլի բնակչուհու
համար էք գնել:

—Այսինքն... ես... այս ես... մտածում էի...

—Որ այդպէս է, անպատճառ լսուր կը լինի:

—Շուրբինը վերկացաւ աթոռից:

—Ռուր գնանք այսօր երեկոյեան, Պաւել Նակօվլեվիչ, հօը,
հարցրեց նրան Նիկոլայ Արտեմենվիչը, սիրավիր կերպով նայելով
նրա աշքերին:

—Զ՞ որ դուք կլուր կը գնաք:

—Կլուրից յետոյ... կլուրից յետոյ:

Շուրբինը նորից ձգուեց:

—Ոչ, Նիկոլայ Արտեմենվիչ, ես վաղը պէտք է աշխատնմ:
Մի ուրիշ անդամ: —Եւ նա դուրս գնաց:

Նիկոլայ Արտեմենվիչը յօնքերը կիտեց, մի երկու անգամ
անց ու դարձ արաւ սենեակում, գլրոցից հանեց թաւչէ արկ-

զիկը, որի մէջ էր մանեակը և երկար անապամ էր նրան ու շփում մեռագուէ բարակ շորտի Յետոյ նա նստեց հովերու տառջ և սկսեց խնամքով առներել իր խօս թափ մաղերը, դէմքի վրայ մի վեհաթիւն պահեցավ, խնամքում էր զլուխոր կամ դէսի աջ կամ դէսի ձախ, լեզուն թշին գէմ տալով և աչքը չը հետացնելով սանրութեաբից, Մէկը հազար նրա մէջքի ետեւում, նա յետ նայեց և ահասու լրպեցին, որ սուրբ էր բերել նրա համար:

—Ի՞նչ կայ, հարցրեց նա:

—Նիկոլայ Արտեմեվիչ, արտասանեց լաբեյր ոչ տասնյ հանդիսաւորութեան, —զուք մեր տղան էր:

—Գիտեմ, յետոյ:

—Նիկոլայ Արտեմեվիչ, զուք ինձ վրայ մի հաճեցէր բարեկանաւ, միայն ես, գանուելով ձեր ոզորմածութեան մաս ծառացութեան մէջ փար հասակից, սարկական եռանդից պէտք է յայտնեմ ձեր ոզորմածութեան...

—Ի՞նչ կայ, ի՞նչ:

Լաբեյր մի քիչ շփոթուեց:

—Դուք անո հաճում էր տուի, սկսեց նա, —թէ չէր հաճում իմանալ թէ ուր է Ելենա Նիկոլաևինան զնալ հաճում ևս այդ իմացայ:

—Ի՞նչ ես սուտ զուրս տալիս, յիմար:

—Կամքը ձերն է, միայն ես երեք օր առաջ ահասայ թէ ինչ-պէս նո մի տաւն մանել հածեց:

—Ո՞ւր, ի՞նչ ի՞նչպիսի տան:

—...եան փողոցում՝ Գօվարսկայեա փողոցի մօտ Այստեղից հեռու չէ ես հարցրի գմնապանին, թէ ովքեր են կինում այդտեղ:

Նիկոլայ Արտեմեվիցը սաները յատակին խփեց:

—Լոփիր, անգործ: Ի՞նչպէս ես համարձակուում... Ելենա Նիկոլաևինան, իր բարութիւնից, այցելում է աղքաներին, խոկ դու... Դուրս կորիր յիմար:

Վախեցած լաբեյր ուզում էր վազել դէսի դռները:

—Կամց, բացականչեց Նիկոլայ Արտեմեվիչը: Ի՞նչ ասաց քննապահը:

—Ոչ... ի՞նչ չասաց: Ասում է ուսումնող:

—Լոփիր, անգործ: Լոփիր, լիրը, եթէ դու երազումդ էլ մէկին այդ մասին բերանիցդ մի խօսք կը թոցնես...

—Ի՞նչ էր հրամայում...

—Լոփիր, եթէ գու ծպուտ էլ հանես... եթէ մէկը... եթէ ես իմանամ... Դու իմ ձեռքից հողի տակ էլ տեղ չես գտնի: Լսում ես Կորիր:

